ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

04.07.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ԶՈՒ ՖՊ և սպորտի բաժնի ֆիզիկական պատրաստության բաժանմունքի ավագ, փոխգնդապետ Ա. Սաղաթելյան:
Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:
Բացակայում է ՀՀ ԶՈՒ ՖՊ և սպորտի բաժնի ֆիզիկական պատրաստության բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Դավթյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացրել է, սակայն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագրերը) չեն համապատասխանում հրավերի պահանջներին.

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝
ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:
Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հագուստի մատակարարման պայմանագրերը:
բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Այսպիսով, սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հագուստի մատակարարման պայմանագրերը, այնինչ «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԲՄԱՊՁԲ-2/1-1 և ՍՊ-ԲԸԱՊՁԲ-16/01 ծածկագրով պայմանագրերը հագուստի մատակարարման վերաբերյալ չեն:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Հաշվի առնելով, որ «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագրերը) չեն համապատասխանում հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և առաջարկել մասնակցին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեղ գտած անհամապատասխանությունը:

Մասնակցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

1.2 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 09.07.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Հովսեփյան

Գնահատող, Ա. Սիմոնյան

Գնահատող Ա. Սաղաթելյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան